ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանի և Արցախի թեմերի հոգևորականների ընդհանուր հավաք՝ նախագահությամբ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Ներկա էին թեմակալ բոլոր առաջնորդները՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Գեղարքունիքի թեմի առաջնորդ Անանիա եպս. Արաբաջյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպս. Մարտիրոսյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ վրդ. Զուլչյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել վրդ. Քարամյանը, Սյունիքի թեմի առաջնորդ Աբրահամ վրդ. Մկրտչյանը, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության անդամներ՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, աբեղաներ, սարկավագներ, ընդհանուր թվով՝ 120 հոգևորականներ, մեծ մասամբ ծխատեր քահանաներ:

Ողջունելով ներկաներին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ սույն հավաքը, որ առաջինն է իր կաթողիկոսության շրջանում, Ս. Զատկի Ավագ շաբաթվա նախօրյակին նպատակ ունի ճշտելու մեր հոգևորականության գործունեության նպատակները, ծիրը, ընթացքը և քննելու, թե ի՞նչ ենք արել և մանավանդ, թե ի՞նչ ենք պարտավոր անելու:

Ապա Վեհափառ Հայրապետը հանդես եկավ դասախոսությամբ, որը մի յուրովի խորհրդածություն էր ժողովրդին ճիշտ ծառայելու, Եկեղեցուն նվիրումով սպասավորելու խնդիրների շուրջ՝ մեջբերումներ անելով Ս. Գրքից և մեր Եկեղեցու Հայրերից:

Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Եկեղեցու սպասավորների գործունեությունը, Նորին Սրբությունը ցանկություն հայտնեց, որ նման հանդիպումները դառնան ավանդական:

Վեհափառի խոսքից հետո ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որի ընթացքում հնչեցին առաջարկություններ՝ քահանայական ծառայությունը ճիշտ կազմակերպելու, այն ավելի գործուն և օգտակար դարձնելու առումով: Բոլոր արտահայտվողներն էլ նախ նշեցին, որ նման հավաքները պետք է դառնան հաճախակի, քանզի Վեհափառ Հայրապետի խորհուրդների կարիքը ունեն բոլորն էլ: Նշվեց հոգևոր գրականության պակասի փաստը, որը կօգնի քահանաներին իրենց ծառայության ընթացքում հաղթահարելու առկա թերացումները, լրացնելու բացը, ինչից օգտվում են տարբեր աղանդների քարոզիչները: Քահանաները ժողովրդի և Եկեղեցու կապող օղակն են և ժողովրդի հետ պարտավոր են տանելու բացատրական, ուսուցողական աշխատանք՝ Հայ Եկեղեցու խորհուրդների վերաբերյալ: Հատուկ կարևորությամբ ընդգծվեց նաև զինվորների, բանտարկյալների, հիվանդների, ծերերի և որբերի հետ տարվող աշխատանքի անհրաժեշտությունը:

Ասուլիսի ընթացքում եղան նաև քննադատական ելույթներ՝ քահանայական ծառայության որոշ թերացումների և չարաշահումների մասին:

Նորին Սրբությունն ուշադիր լսելով բոլոր առաջարկությունները և դիտողությունները՝ դրանց վերաբերյալ արեց համապատասխան նշումներ և հավաստիացրեց, որ արված դիտողությունները հաշվի կառնվեն Մայր Աթոռի հետագա գործունեության ընթացքում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ